

ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

ԴԵՐԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ԾԻՍԵՐԳԵՐԻ ԱՅԼԱԲԱՆԱԿԱՆ ՊԱՏԿԵՐՈՒՄՆԵՐՈՒՄ

ՆՎԱՐԴ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հարսանեկան ծիսերգերը, որոնք առանձին-առանձին վերցրած ծեսի մի որևէ դրվագ կամ մասնակիցների որոշակի հոգեվիճակ են ներկայացնում, ամբողջության մեջ արտացոլում են ծեսի ողջ ընթացքը: Ըստ ծեսի փուլերի համակարգման ծիսերգային բնագրերը մի վիպական հյուսվածք են հիշեցնում՝ գլխավոր ու երկրորդական դերակատարներով, դիպաշարային կուռ ու միաձույլ ամբողջականությամբ, գործողությունների մշակված հերթականությամբ:

Ծիսական բնագրի այսպիսի ամբողջականությունն անշուշտ նախ և առաջ բխում է հարսանեկան ծեսի բնույթից, և սա նկատվել է և՛ ազգագրական, և՛ բանագիտական աշխատություններում: «Ակնայ հարսանիքը նկարագրել՝ կը նշանակէ բազմերանգ դրրուագներով վեպ մը գրի առնել...»¹, - գրում է Թ. Ազատյանը. իսկ հարսանեկան երգերը վերլուծող բանագետ Ա. Ղանալանյանը հարսանեկան ծեսը իրավացիորեն բնութագրում է որպես «...մի շարք գործողություններից բաղկացած մի մեծ դրամա...»²: Հարսանեկան ծեսը գրի առնող որոշ բանահավաքներ, այս սկզբունքից ելնելով, բնագիրը ներկայացրել են դրամատիկական պիեսի կամ վիպական հյուսվածքի ձևով³:

Եթե ծիսական բնագրի ամբողջությունն ընկալենք որպես մի պիես կամ դրամա, ապա ինչպես յուրաքանչյուր դրամատիկական ստեղծագործություն, նրա մասնակիցներին կարող ենք համարել դրամատիկական այդ հյուսվածքի դերակատարներ՝ գլխավոր և երկրորդական կերպարներ, որոնցից յուրաքանչյուրն ունի իր որոշակի դերը՝ կազմված գործողության և խոսքի միացությունից: Բնականաբար, գլխավոր դերում փեսայի և հարսի կերպարներն են⁴, որոնց և մեծ մասամբ ուղղ-

¹ Թ. Ազատյան, Ակն և Ակնցիք, Իսթամպուլ, «Մշակույթ» հրատ., 1943, էջ 24:

² Ա. Ղանալանյան, Ժողովրդական բանահյուսություն, պրակ Ը, Եր., 1945, էջ 27:

³ Տե՛ս, օրինակ, **Երվանդ Տեր-Մկրտչյան**, Վանեցոց հարսանիքը, // Հայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետ՝ ՀԱԲ), հ. 1, Եր., 1970, էջ 143-186:

⁴ Ծեսի դերային հաղորդակցական կառուցվածքը ներկայացնելիս Բայբուրինը նշում է հարսանեկան ծեսի մի յուրահատկություն. կախված նրանից, որ ծեսում կան երկու գլխավոր դերակատարներ, այստեղ ավելի պարզ կերպով է արտահայտվում ծեսի դրամատիկական բնույթը: Ըստ այդմ էլ դերակատարները հստակ երկու խմբի են բաժանվում՝ փեսայի խումբը և հարսի խումբը (տե՛ս **Байбури А. К.** Ритуал в традиционной культуре, Структурно-семантический анализ восточнославянских обрядов, СПб., 1993, էջ 195):

վում է հարսանքավորների երգային խոսքը: Գլխավոր այս կերպարների կողքին հաճախ հիշատակվում են նաև ծեսի մյուս մասնակիցները (փեսահայր, փեսամայր, քավոր, ազապբաշիներ, ծաղկոցի աղջիկներ, այլք): Ընդ որում, կերպարային այս հարուստ համակարգի ներկայացուցիչները հանդես են գալիս և՛ նկարագրական ծիսերգերում՝ որպես ծիսական գործողության մասնակիցներ, և՛ տրամախոսական երգերում՝ որպես երկխոսող կողմեր: Սույն հոդվածի շրջանակներում կանդադարառնանք առաջիններին:

Հարսանեկան մի շարք երգերում ծիսական–հմայական խոսքին հատուկ հարակրկություններով մեկ առ մեկ հիշատակվում են ծեսի մասնակիցները: Նմանատիպ երգերը հավաքում–ամբողջացնում են միկրոհամայնքը՝ սկսելով հարսի և փեսայի ընտանիքների անդամներից և հասնելով մինչև մեծ համայնքի ընդգրկումներին: Ընդ որում, հարսանիքի մասնակից-դերակատարների պատկերավորումն այս ծիսերգերում այլաբանորեն է կատարվում՝ առարկայական, բուսական, թռչնային, կենդանական և տիեզերական փոխաբերությունների միջոցով, առասպելլաստեղծ աշխարհայացքից սերող մարդ-բնությունն նույնականացմամբ⁵: Նման ծիսերգերն արմատներով հմայական, պաշտամունքային ակունքներից են սերում և պահպանել են վաղ մտածողությանը հատուկ՝ փոխանվանական–այլաբանական պատկերավորման կերպը⁶, թեև, հատկապես կատակերգերի պարագայում, հետագայում կենցաղային–երգիծական բնույթ են ստացել:

Պաշտամունքային–հմայական շերտը հատկապես ակնհայտ է ծառագովքերում, որոնք երգվում են հարսանեկան ծառը զարդարելու ծեսին զուգահեռ⁷: Հարսանեկան ծառը թերևս հարսանեկան ծեսի ամենաուշագրավ ու ընդգրկուն իմաստաբանությամբ օժտված խորհրդանիշն է, որն ընկալվում է որպես փեսայի և հարսի պտղավորման առհավատյալ: Լայն առումով դա տիեզերական՝ դրախտի ծառն է, որի մոտ տեղի է ունեցել դրախտի առաջին գույգի ամուսնությունը⁸: Որպես մի համընդհանուր խորհրդանիշ՝ ծառն իր մեջ միահյուսում է աշխար-

⁵ Այս մասին տե՛ս **Топоров В. Н.** Модель мира (мифопоэтическая), // Мифы народов мира, т. 2, М., 1992, էջ 162:

⁶ Այս մասին տե՛ս **Фрейденберг О. М.** Почтика сюжета и жанра, М., 1997, էջ 202:

⁷ Հարսանեկան ծառը կամ «փեսայի ծառը» փեսայի հիմնական խորհրդանիշն ու նրան ուղեկցող հիմնական պարագան է, որը տարբեր ազգագրական շրջաններում հանդիպում է տարբեր անվանումներով՝ ուռք, նուռձ, ուռի ճյուղ, ուռց, ուրց, ուրս, փոփրիս, պսակածառ և այլն: Այն հիմնականում պատրաստում էին փեսային հագցնելու ծիսակարգին զուգահեռ (տե՛ս **Գ. Շագոյան**, «Յոթ օր, յոթ գիշեր». Հայոց հարսանիքի համայնապատկեր, Եր., 2011, էջ 278):

⁸ Առաջին տղամարդու և կնոջ՝ Ադամի և Եվայի՝ տիեզերական ծառի մոտ տեղի ունեցած ինցեստային կապը թեև պատճառ է դառնում մահի առաջացման, սակայն դրա հետ մեկտեղ՝ նաև կենաց ծառի հավերժական կենսանորոգման: Այս մասին տե՛ս **Абрамян Л. А., Демирханян А. Р.** Мифологема близнецов и мировое дерево, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1985, № 4 (III), էջ 76:

հի տարբեր պատկերներ ու մակարդակներ՝ աստվածաշնչյան, եկեղեցական ու տիեզերական⁹: Սա ակնհայտ է հատկապես ծառագովքի միջնադարյան տարբերակներում, ուր ծաղկող ծառի խորհրդաբանությունը մեկնաբանվում է նախ աստվածաշնչյան կերպարներով («*Այն ճեղքեր ալփին-ալփին // Աստվածածինն էր. // Լուսեղեն պտուղ առաւ // Տէր միածինն էր*»¹⁰), այնուհետև եկեղեցական («*Էն սալամ՝ սար հնչելով // Վարդապետն է. // Էն կաքավ՝ կարկաչելով // Երիցաներն է*»¹¹) և, ի վերջո, երրորդ մակարդակում սկսում են գովվել և թվարկվել հարսանիքի բուն մասնակիցները:

Հարսանեկան ծառը ծիսերգերում ներկայացվում է որպես խնձորենի, որի ճյուղերի վրա շորորվող խնձորներից յուրաքանչյուրը նույնացվում է ծեսի մասնակից-դերակատարներից մեկին: Ըստ երգային բնագրի՝ ծաղկած և պտուղ տված ծառը նորափեսան է, իսկ ծեսի մյուս գլխավոր դերակատարները՝ շուրջը բազմած խնձորները:

- Ծաղկեցաւ ծառս կենաց՝ Էն թագաւորն է. Բազմեցաւ խէչն ի գլխուն՝ Էն իւր պսակն է: -Այն խնձոր, գլխախնձոր, Տեսէ ք, այն ո՛րն է, Այն խնձոր, գլվագլոր՝ Այն ազափներն է:	-Այն խնձոր աջ աթոռին, Տեսէ ք, այն ո՛րն է. Այն խնձոր ձախ աթոռին, Տեսէ ք, այն ո՛րն է: -Այն խնձոր աջ աթոռին՝ Այն խաչեղբայրն է. Այն խնձոր ձախ աթոռին՝ Էն թագուհին է ¹² :
--	--

Խնձորների բազմազան անվանումներով աչքի են ընկնում ծառագովքի՝ Կոմիտասի գրառած տարբերակները, ուր խնձոր բառի բառաբարդումներով արտահայտվում են մասնակից-դերակատարներից յուրաքանչյուրի կարևորությունը և նշանակությունը ծեսում: Հարսանիքի ամենագլխավոր դերակատարը՝ փեսան, անվանվում է *գլխախնձոր* կամ *օրհնյալ խնձոր*, երկրորդ գլխավոր դերակատարը՝ հարսը՝ *բնի մեկ հաստ խնձոր* կամ *ձեռախնձոր*, քավորը՝ *թևախնձոր* և այլն.

... *Գլխախնձոր*, էն թագավորն ա,
Թևախնձոր, էն ուր քավորն ա...
Այն աջի *ձեռախնձոր*... մեր թագուհին է,
Այն ձախի *քեֆախնձոր*... կնքահայրերն են:
Այն ներքի *եռախնձոր*... հարսնևորներն են:
Այն միջի *օրհնյալ խնձոր*... նոր թագավորն է:
Այն *բնի մեկ հաստ խնձոր*... նոր թագուհին է¹³:

⁹ Փեսայի ծառի՝ որպես տիեզերական հարացույցի մեկնաբանությունը տե՛ս Գ. Ծագոյան, նշվ. աշխ., էջ 286-287:

¹⁰ Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողորդական երգեր, Եր., 1956, էջ 297:

¹¹ Նույն տեղում:

¹² Նույն տեղում, էջ 300-301:

¹³ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, «Հայ ժողովրդական երգեր», գիրք Բ, Եր., 2000, էջ 76:

Ծառի խնձորների և հարսանիքի գլխավոր դերակատարների կապը տեսանելի է նաև ծառ զարդարելու ծեսի նկարագրություններում: Ըստ այդմ, ծառը հաճախ զարդարվել է փեսայի հարագատների բերած խնձորներով. յուրաքանչյուրի բերած խնձորը գովելուց հետո այն ամբացրել են ծառին¹⁴, ըստ երևույթին նույնացնելով այն տվողի հետ: Եվ ինչպես երգում, այնպես էլ ծիսական սովորույթներում, ծառի վերնամասում գտնվող խնձորները գլխախնձոր են կոչվել¹⁵:

Խնձորներից բացի, այս յուրահատուկ հարսանեկան ծառը զարդարում են նաև բամբակով և մանուշակներով, որոնցից յուրաքանչյուրը դարձյալ ծեսի մի որևէ մասնակցի է խորհրդանշում («**էն քույա բամբակն** ի ծառեն՝ թագվորամերն է»¹⁶, «**Փունջ մանուշակ**, որ ծաղկեցաւ // Էն աղջիկներն էր...»¹⁷):

Ուշագրավ է, որ հարսանեկան ծառագովքում որպես ծառի պտուղներ չեն պատկերավորվում խնամիները՝ հարսի կողմի հարագատները: Վերջիններս փոխանվանաբար ներկայացվում են որպես ամպող-պարզվող երկինք, իսկ նրանց խոսքերը՝ որպես երկու հոգնած հավք.

-Այն երկինք, որ ամպ ու պարզ

Եւ աննման էր.

Երկու հաւք, որ տետետափ,

Ի՛նչ աննման էր:

-Այն երկինք, որ ամպ ու պարզ

Այն խնամտիք էր.

Երկու հաւք, որ տետետափ,

Խնամտոց խօսքերն էր¹⁸:

Աղջկա կողմի խնամիները հարսանեկան ծեսում որոշակի հակասական ապրումների կրող են: Աղջկա ամուսնության ուրախալի փաստը որոշակիորեն ստվերվում է նրա հեռացման հանգամանքով, դեռևս անհայտ ճակատագրի մտավախությամբ, որով պայմանավորված՝ խնամիների երգերում ուրախ և տխուր երանգները միատեղվում են:

Սակայն աղջկա կողմի խնամիների՝ որպես ծառի պտուղներ չհիշատակվելու պատճառը այլ տեղ պետք է որոնել: Հարսանիքի գլխավոր մասնակիցներին ամբողջացնող այս յուրօրինակ մանրակերտը՝ հարսանեկան ծառը, լինելով հարսի և փեսայի պտղավորման ու աճի խորհրդանիշը, միևնույն ժամանակ տոհմաձառի իմաստաբանություն է ձեռք բերում¹⁹: Ամուսնությունը փեսայի տոհմին պետք է նոր աճ ու

¹⁴ Տե՛ս **Գ. Շագոյան**, նշվ. աշխ., էջ 280, **Քաջբերունի**, Ընտանեկան կեանք եւ սովորույթներ, // «Ազգագրական հանդես», գրքեր VII և VIII, 1901, էջ 169:

¹⁵ **Քաջբերունի**, նշվ. աշխ., էջ 152:

¹⁶ **Ե. Լալայան**, Երկեր հինգ հատորով, հ. 1, Եր., 1983, էջ 365:

¹⁷ **Ա. Մնացականյան**, նշվ. աշխ., էջ 301:

¹⁸ Նույն տեղում:

¹⁹ Հարսանեկան ծառի ընտանեկան իմաստաբանության մասին տե՛ս **Զ. Աճառյան**, Հայերեն գավառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1067-1068, **Ա. Մնացականյան**, Հայկական զարդարվեստ, Եր., 1955, էջ 232-233:

ծլարձակում բերի, և հետևաբար՝ ծաղկող և պտղավորվող ծառը փեսայի տոհմածառն է: Հարսանեկան ծառի նկարագրություններում փեսայի հարազատների հիշատակումը տեսանելի է նաև այլ ծիսերգերում: Բնութագրական է ծառագովքին հաջորդիվ երգվող ծիսերգի Մշո տարբերակը, ուր հերթով կանչվում են փեսայի ընտանիքի անդամները՝ զարդարված ծառն օրհնելու: Այս կոչ-երգում ընտանիքի անդամները բնութագրվում են որպես ծառի ճյուղերին շորորվող.

Կանչեք բերեք զթագվորահեր,
Որ գիկեր շորորն ի ծառին,
Ծնորիկ զարկեր սուրբ սեղանին,
Խերն ու բարին մեր թագվորին:
Կանչեք բերեք զթագվորամեր,
Որ գիկեր շորորն ի ծառին...
Կանչեք բերեք զթագվորաքուր,
Որ գիկեր շորորն ի ծառին...
Կանչեք բերեք զթագվորաղբեր,
Որ գիկեր շորորն ի ծառին...²⁰

Հարսանեկան ծառի տոհմածառային իմաստաբանության օգտին են խոսում նաև հարակից այլ հանգամանքներ: Ծառի համաբանությամբ է բնութագրվում փեսայի հայրը՝ հաստագերան, որն ըստ երևույթին հարսանեկան ծլարձակող ծառի բունն է ներկայացնում («-Էն միջի **հաստագերանն** թագուրի հերն է»²¹), իսկ որմի մոտի փտած կոճերը՝ ծերունիներն են («-Էն **փտած կոճն ի որմին** // Հալևորներն է...»²²):

Ակնհայտ է, որ գովվողը տոհմածառն է, որը տվյալ դեպքում փեսայի ծառ է. փեսան է «ծառի վրա բազմած այն խաչը» կամ այն «օրհնյալ խնձորը», որը պետք է ապահովի ծառի նոր աճն ու պտղավորումը:

Ի տարբերություն ծառի պտղային այլաբանության, առավել լայն՝ տիեզերական, կենդանական, թռչնային և առարկայական այլաբանական պատկերավորումներով են ներկայացվում հարսանիքի մասնակից-դերակատարները՝ «Էն դիզան, բետ-բետ դիզան»՝ շատ սիրված և տարածված կատակերգում, ուր արդեն տեսանելի են ոչ միայն փեսայի հարազատներն ու անմիջական շրջապատը, այլև ողջ համայնքը՝ տարբեր խավի, սեռի ու տարիքի ներկայացուցիչներով: Ծիսական հարակրկնություններով, հանելուկային, այլաբանական հարց-պատասխան կառուցվածքով մասնակիցներին հիշատակելու և աստիճանաբար համայնքն ամբողջացնելու, հմայական խոսքի ուժով տիեզերական մանրակերտ ստեղծելու սկզբունքն է ընկած «Էն դիզան, բետ-բետ դիզան» խմբերգի հիմքում: Այս ուրախ կատակերգը սովորաբար կատարվել է հարսանեկան խնջույքի ժամանակ: Բանագետ-ազգագրագետ Բենսեն, օրինակ, այն «թոնոցի պար» է անվանում և նշում, որ ծի-

²⁰ Ս. Մովսիսյան (Բենսե), Հարք (Մշո Բուլանըխ), ՀԱԲ, հ. 3, Եր., 1972, էջ 108-109:

²¹ Մ. Միանսարյանց, Քնար հայկական, Ս.Պետերբուրգ, 1868, էջ 145-146:

²² Ա. Մնացականյան, Հայկական միջնադարյան ժողովրդական երգեր, էջ 301:

սերգը կատարում ու պարում էին հարսանեկան տոնախմբության ժամանակ²³: Կատակերգի տարբերակներում մասամբ կրկնվում են վերոհիշյալ ծառագույքերի առանձին բանատողեր, սակայն այս ծիսերգը տարբերվում է նախորդից կենցաղային երգիծանքի դրսևորումներով: Երգերի կենտրոնում դարձյալ հարսի և փեսայի կամ թագուհու և թագավորի կերպարներն են՝ արևի և լուսնի այլաբանությամբ.

Էն արև, երկնուց արև, տեսեք էն ո՞րն է:
Էն արև, երկնուց արև՝ մեր թագավորն է:
Էն լուսին ամպերի մեջ տեսեք էն ո՞րն է:
Էն լուսին ամպերի մեջ՝ մեր թագուհին է²⁴:

Երգի տարբերակներում հիշատակվում են սոցիալական երեք շերտի ներկայացուցիչները՝ հոգևոր առաջնորդներ, աշխարհիկ տերեր և աշխատավոր, հասարակ ժողովուրդ: Ընդ որում, հիշյալ երեք խավերը երգերում բնութագրվում են ոչ միայն հարսանիքում ունեցած դերակատարման առումով, այլև ընդհանրապես, հարսանիքից դուրս, համայնքում իրենց ունեցած դերով:

Ամենից հաճախ հիշատակվող կերպարները հոգևոր դասի ներկայացուցիչներն են՝ վարդապետ, տիրացու, սարկավագ, ժամկոչ և այլ.

Առուծներ մրմնջալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Առուծներ մրմնջալեն՝ էն *վարդապետներն է...*
...Կաքվրներ կրկրալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Կաքվրներ կրկրալեն՝ էն *սարկավագներն է:*
Ճնճղներ ճլվրլալեն՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Ճնճղներ ճլվրլալեն՝ էն *տիրացուքստանն է...*
Էն ավել դռան էտև՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Էն ավել դռան էտև՝ էնի *ժամակոչն է...*²⁵

Ակնհայտ է, որ հոգևորականության պարագայում շեշտվում է հատկապես նրանց ծիսական դերակատարությունը՝ եկեղեցական արարողության, պսակի կարգի ժամանակ երգելը, շարական մրմնջալը, որոնք այլաբանորեն ներկայացվում են որպես երգող թռչունների դայլայլ, որպես առյուծի մրմունջ: Սակայն հարսանեկան երգերը գերծ չեն նաև տերտերներին ուղղված ծաղրական խոսքերից, որոնք այնքան առատ են հատկապես ժողովրդական հեքիաթներում, զրույցներում ու առակներում: Հարսանեկան ուրախ տոնակատարության, հումորի ու երգիծանքի համապատկերում հոգևորականության՝ ծաղրի ենթարկվող հատկանիշը որկրամոլությունն է, որի մասին ակնարկներ առկա են «Էն դիզան, բետ-բետ դիզան» երգի տարբերակներում.

Շատ ուտող, քիչ վճարող՝ տեսեք թ'էն ո՞րն է,
Շատ ուտող, քիչ վճարող՝ էն տերտերն է²⁶:

²³ Տե՛ս **Ս. Սովսիսյան (Բենսե)**, նշվ. աշխ., էջ 97:

²⁴ **Կոմիտաս**, Երկերի ժողովածու, հ. 3, «Խմբերգեր», Եր., 1969, էջ 19:

²⁵ **Ե. Լալայան**, նշվ. աշխ., էջ 365:

²⁶ Նույն տեղում, էջ 365:

Տիկր ուսին, աչքը մսին ... ժամակոչն է ²⁷:

Հոգևոր դասին զուգահեռ՝ հիշյալ երգերում հիշատակվում են նաև համայնքի աշխարհիկ առաջնորդները՝ առանձնապես՝ գյուղի ռեսներն ու զգիրը.

Էն դիզան, բետ-բետ դիզան, տեսեք էն ո՞րն է:
Էն դիզան, բետ-բետ դիզան՝ *զեղի ռեսներ* է՝ ²⁸:
Շունն էկավ պարկն ի բերան՝ տեսեք էն ո՞րն է,
Շունն էկավ պարկն ի բերան՝ *զեղի զգիրն* է՝ ²⁹:

Եթե գյուղի ռեսերի նկատմամբ վերաբերմունքն ակնհայտ հարգալից է, ապա զգիրը միշտ ծաղրական է ներկայացվում. երգի բոլոր տարբերակներում զգիրը նկարագրվում է որպես պարկը բերանում մի շուն: Անթաքույց ծաղրը, զգրին որպես գյուղապետի շուն ներկայացնելը, որի բերանի պարկն անշուշտ դրամ հավաքելու համար է (զգիրը տանուտերի հանձնարարությունները կատարողն էր, կատարածուն ու նաև հարկ հավաքողը), խոսում է այն մասին, որ զգիրի կերպարը, մեղմ ասած, ժողովրդի համակրանքը չի վայելում:

Սոցիալական երրորդ խավի ներկայացուցիչների թվարկումը հիմնականում կատարվում է մշակների և ջաղացպանի կերպարների հիշատակմամբ.

Ցախաւել ետեւ դըրան տեսեք թէ էն ո՞րն է.
Ցախաւել ետեւ դըրան էն *մըշկըներն* է:

Մուկն եկաւ արըրթաթախ, տեսեք թէ էն ո՞րն է.
Մուկն եկաւ արըրթաթախ, էն *ջաղըրպանն* է՝ ³⁰:

Հարսանիքի մասնակիցների թվարկում-ամբողջացումը ներառում է նաև ծեսի ամենաբազմազան դերակատարներին՝ ազգայներին ու հարսնեղբորը, երիտասարդ աղջիկներին ու հարսներին («*էդ հավքեր զխվըխալեն՝ էն աղջրկներն են*», «*Ճնարոս ճլվլալեն՝ էն նորհարսներն են*»³¹), ծառ գովողներին («*Հինգ գաթա, վեց խաչ գաթա՝ էն ծառ գովողներն է*»³²) և անգամ՝ գյուղի բամբասկոտ, պառավ կանանց, որոնց ժողովուրդը երգիծանքով բնութագրում է որպես «*փսիսալով տներ քանդող*»³³:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, ծեսի մասնակիցների հիշատակումը երգերում բավականին հստակ պատկերացում է տալիս հարսանիքում նրանցից յուրաքանչյուրի ունեցած դերի մասին, իսկ խորհրդանշական պատկերումը բացահայտում է այդ դերի իմաստաբանությունը:

²⁷ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 76:

²⁸ Նույն տեղում, հ. 3, էջ 19:

²⁹ Ս. Մովսիսյան (Բենսե), նշվ. աշխ., էջ 109:

³⁰ Ս. Միանասարյանց, նշվ. աշխ., էջ 145-146:

³¹ Ս. Մովսիսյան (Բենսե), նշվ. աշխ., էջ 109:

³² Ե. Լալայան, նշվ. աշխ., էջ 366:

³³ Կոմիտաս, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 76:

Այդպիսի պատկերումներով հարուստ են հատկապես ծառագովքերը և երգիծական «Էն դիզան, բետ-բետ դիզան» կատակերգի տարբերակները: Եթե ծեսի գլխավոր մասնակիցները, հատկապես փեսայի անմիջական հարազատները, հիշատակվում են որպես հարսանեկան ծառի վրա աճած խնձորներ, որով ընդգծվում է փեսայի ծառի տոհմաճառային իմաստաբանությունը, ապա մյուս մասնակիցները, ընդհուպ համայնքի տարբեր խավերի, սեռի ու տարիքի ներկայացուցիչները, հիմնականում թռչնային, կենդանական խորհրդանիշներով են ներկայացվում՝ ամբողջացնելով համայնքի տիեզերական մանրակերտը, որի կենտրոնում այս դեպքում տիեզերական լուսատուներն են՝ փեսան և հարսը:

Մարդ-բնություն-կենդանական աշխարհ այս միաձուլումը հարսանեկան հմայական բնագրերի շրջանակներում ստեղծում է տիեզերական այն կայուն ներդաշնակությունը, որը պետք է նորակազմ ընտանիքի ամրության, աճի և պտղավորման հիմք դառնա:

Բանալի բառեր – *հարսանեկան երգեր, դերային ընկալումներ, ծեսի մասնակիցներ, հարսանեկան ծառ, խնձոր, «Էն դիզան, բետ-բետ դիզան» կատակերգ, ծիսական խոսքի իրացողներ*

НВАРД ВАРДАНЯН – Ролевое восприятие в иносказательных изображениях свадебных обрядов. – Свадьба напоминает спектакль, в основе которого лежит пьеса. Пьеса в данном случае состоит из фольклорных текстов, исполняемых по ходу ритуала. В свадебных песнях имеется чёткий сюжет, последовательность действий, главные и второстепенные персонажи.

В обрядовых песнях фигурируют различные персонажи, к примеру, в песнях свадебного деревца и в шуточной песне «Эн дизан, бет-бет дизан». В одной из них невесту, жениха и ближайших их родственников олицетворяют яблоки на ветвях, в других перечень участников обряда включает в себя всю общину, причём их изображают аллегорические животные и птицы.

Ключевые слова: *Свадебные песни, ролевые особенности, участники ритуала, свадебное дерево, яблоко, шуточная песня “Эн дизан, бет-бет дизан”, исполнители ритуального слова*

NVARD VARDANYAN – Features of Role Perception in Symbolic Images of Characters of Wedding Songs. – Wedding, on the whole, resembles a performance, which is based on a play text. In this context, the play consists of those folklore texts, that are performed during the ritual. In the wedding songs, there is a clear story, sequence of actions, main and secondary characters.

Characters of wedding songs are featured in the songs of the wedding tree and in the playful song "En Dizan, Bet-Bet Dizan". In the wedding tree songs, the bride, groom and their closest relatives are referred to as apples on the tree, in a jocular song the list of mentioned participants in the ritual includes the whole community with representatives of all groups, that are represented by the symbols of animals and birds.

Key words: *wedding songs, role perceptions, participants of ritual, wedding tree, apple, the joke song “En dizan, bet-bet dizan”, the performers of ritual words*

Ներկայացվել է՝ 10.01.2018, գրախոսվել է՝ 12.02.2019, ընդունվել է տպագրության՝ 21.02.2019